

այն «յանկ» = յարմար, պատշաճ, վայելիք եւ արժանաւոր էր, այլ նոյն իսկ արդէն «հաղորդ» = մասնակից էր իր Որդւոյն մաքրութեան. այնքան մաքուր էր նա՝ որքան իր Որդւոյն մարմինը:

Նոյն ճառին մէջ՝ զինքը փափկութեան դրախտէն գերադոյն կը դնէ: Կը ցնծանք «այսօր ի ճշմարիտ եւ ի գերադոյն դրախտիս Աստուծոյ՝ ի տնկելն». ուրեմն անմեղութեան վիճակին մէջ կը ճանչնայ զՍ. Կոյսը, եւ ա՛յդ իսկ է անարատ յղացեալ ըլլալ:

Սեպտ. 8ի Ներբողը, Յովակիմ եւ Աննա «Ծնան այսօր Հոգւոյն շնորհաց վտակօք»: Իր դոյութեան առաջին վայրկեանէն «Հոգւոյն (Սրբոյ) շնորհաց առատութեան մէջ ծնած մէկը՝ չի կրնար Աստուծոյ թըշնամութեան մէջ ըլլալ, այլ՝ միայն Անարատ:

Բ ներբող, «Բազմավէպ» 1947, թ. 9-10, էջ 210, ս՝ 1 կը գրէ «Միայն մարդն անարատ եւ աստուածապատկեր», Մարդը բացարձակ առնուած:

Նոյն ճառին մէջ, Աստուծոյ արարչագործութեան հրաշակերտ մը կը նկատուի Մարիամ, եւ իր այդ վեհ գործին աւարտը՝ կը տօնախմբէ ինքն Աստուած, եւ կ'ուրախանայ: Ուր կը յաւելու «Զոր (Ս. Կոյսը) հաւատամք կանուխ ընտրեալ եւ հիմնարկեալ Աստուծոյ եւ յառաջ նկատեալ»:

«Յառաջ», ե՞րբ. լսենք: «Զի եթէ... առաքեալքն ոչ միայն քան զծնունդն, այլ եւ քան զլինելն աշխարհի յառաջ ընտրեցան, ծանի՛ր թէ ապա քանի՛ առաւել սա՛ որ ամենայն մարդարէիցն ընտրութեանն էր պատճառ, եւ բոլոր առաքելական գլխերն նախակոչ լինելոյն՝ կատարումն»:

Բայց թէ իր ծնունդէն ո՞րչափ առաջ ընտրուած էր Ս. Կոյսը, ահա. «Նախ քան զամենայն եւ յառաջ քան զբոլորն ընտրեցաւ, եւ կանուխ առ ի յԱստուծոյ նախատես խորհուրդն սկսեալ եղեւ եւ հիմնացեալ. զոր եւ շինէր զսոյն առ ամենայն

նահապետօքն եւ մարդարէիքն, ի դարս առաջինս, ի բանս եւ յօրինակս նախագուշակս»: Կը հետեւի ուրեմն հեղինակին այդ խօսքերէն, թէ՛ Աստուած, որ այսքան կատարեալ. գերծ, ոչ միայն ներգործական՝ ալ նաեւ սկզբնական մեղքէ, որ միւսին արմատն է:

Կը հրաւիրէ բոլոր մարդկութիւնը ցընծալու Ս. Կուսին ծննդեան համար, զինքը կոչելով «հանուր աշխարհի», «երկրի եւ երկնից ղշխոյ»: Ուրեմն անախտ բնութիւններն ալ, հրեշտակները, Իրմէ նուազ են. իրենց թաղութին է նա, հետեւաբար անոնց մաքրութիւնը՝ գերադոյն աստիճանով ունի:

Աւետման ճառին մէջ՝ խօսքը Տիրամօր ուղղելով, «որ միայն գտար փրկիչ, կը դոչէ, յանիծից ի մեղաց եւ ի մահուանէ»: Անէճքը՝ մեղքի արդիւնք է, մահը՝ երկուքին դառն պտուղ: Արդ մեր հեղինակը զՍ. Կոյսը կը ճանչնայ «փրկիչ» մէկէն ու միւսներէն: Ինչպէս, միթէ բանտարկեալ մը կրնա՞յ իրեն բախտակից մ'աղատել. Ս. Կոյսը «փրկիչ» կոչուելու համար՝ պէտք է նոյն յանցանքէ եւ դատապարտութենէ գերծ ըլլալ: Ա՛յդ է ահա որ Անաւարդեցի հայրապետը կը հաստատէ:

Յովակիմ եւ Աննայի ներբողին մէջ, իրենց երկնապարգեւ զաւակը կը կոչուի «Աստուածատուր շնորհի գործ՝ քան թէ բնութեան օրինաց». եւ թէ՛ «փայլէր ի նա կանուխ եւ յառաջագոյն ի սկզբանդ շնորհին մեծութիւն»: Ուրեմն հրաշալի ծնունդ մ'է այդ, եւ ոչ ուրիշներու պէս սովորական բան մը:

Ոչ նուազ գեղեցիկ է յաջորդ խօսքը «փայլէր ի նա» եւն. այսինքն, այդ Երբորդ Եւայի վրայ՝ եղեմական ամբօք-

թեան փառքը կը փայլէր իր բոլոր մեծութեամբ. ճիշտ այնպէս՝ ինչպէս երբ Աստուծոյ ձեռքէն դեռ նոր էր ելած. կամ լաւ եւս՝ անմեղութեան նախնական վիճակին մէջ էր, եւ ա՛յդ իսկ է Անարատ յղացեալ:

Վերջապէս ահա ուրիշ նախադասութիւն մը՝ ուր Անարատ Յղութեան վարդապետութիւնը շատ որոշ ակնարկուած է. «Յամենեցուն մեղանչելն եւ ի նուազիլն ի փառաց Աստուծոյ, թէ ոչ... Տեսնու զօրութեանց թողեալ էր զնա եւ տուեալ մեղզաւակ (փրկութեան) ... ստուգապէս իրբեւ զՍողոմ լինէաք»: Իմաստը պարզ է. մինչ գետօրէն աճող ու իջող մարդկութիւնն ամբողջ՝ մեղքով ու դատապարտութեամբ կը ծնանէր, Ամենակալն Աստուած՝ զՄարիամ միայն պահած էր այդ միլեդին հեղեղէն. ապա թէ ոչ՝ ամէնքս ալ դրժոխքի ճարակ պիտի ըլլայինք:

Անդրադոյն, գուցէ եւ լաւագոյն մեկնութիւններն իմաստուն ընթերցողին կը թողում, եւ կ'անցնիմ նկատելու ճառերուս ԼԵԶՈՒՆ. — Հայերէնի յատուկ նորութիւն մը չունի: Նոյն դարու բնադրոշմը կը ներկայացնեն հետեւեալ բառերն ու ձեւերը: 1. Դիւրաւուայ, դիւրամտալի, 2. Աստուածապատկեր, Աստուծոյ նման, 3. Խուժ հրէից, խուժան, 4. Օժընդակ, օժանդակ, 5. Հաւանաբար, համոզելով, այնպէս մը ընել՝ որ համոզուի, 6. Հրաշագնապէս, հրաշալի կերպով, 7. Ամլածութիւն, 8. Ընդ ծն. դափնիտեալ, դափնեալ, 9. Թմբկութի, թմբկահար կին, 10. Թերապստութիւն, անհամարձակ, անլըստահ, թերահաւատութիւն, 11. ձիւտ, ճիւտ, 12. Աշխատախոնջ, քրտնաջան, 13. Փոխանցիչ, անցնելու միջոց մը, 14. Հպաւորապէս, մերձաւորապէս, եւն.: Ինչպէս ըսի ասոնք անարժէք բաներ են:

Ձեռագիրս մէջ միշտ առ գրուած է. դիւրութեան համար՝ օ դրինք:

Հ. ԳՐ. ՍԱՐԳՍԵԱՆ
(Շարունակելի)

ՄՏԵՓԱՆՈՍ ՆԱՂԱՇ

ԵՐԷՑ ԶՈՒՂԱՅԵՅԻ

Հ. Ն. Վ. Ակինեան «Հանգէս Ամսօրեայ»ի 1947 Փետրուարի թիւին մէջ կը հրատարակէ «Ստեփանոս Զիք Զուղայեցի»ի մասին ուսումնասիրութիւն մը, ուր սակայն կը սխալի զայն նոյնացնելով Ստեփանոս Երէց Զուղայեցիի հետ, ծանօթ իբր Բաղաշ կամ մանրանկարիչ: Այս առիթէն օգտուելով կ'ընեմ կարգ մը ճշգրտման, նոյն ատեն բաժնելով Ստ. Նաղաշի ինքնութիւնը Ստ. Զիքէն, եւ տալով առաջինին կենսագրութիւնը՝ որքան որ կարելի է ինծի ծանօթ նիւթերով:

Հ. Ակինեան խօսելով Ստեփանոս Զիքի մասին կ'ըսէ. «Իր ծնողներն են Ստեփանոս եւ Ծն(ր)հաւոր:... Կնոջ անունն էր Աննա: Կը յիշուին իր զաւակներէն Բարսեղ վարդապետ եւ Յակոբ գրիչ» (անդ, էջ 112):

Նախ պէտք է ըսեմ որ այս Յակոբ գրիչը պէտք է չփոթել Յակոբ գրիչ Զուղայեցիի հետ՝ որմէ ձեռագիրներ հասած են 1592-1607 թուականներով: Ստեփանոս Զիքի որդի Յակոբ գրիչը գուցէ ըլլայ իմ ձեռագրաց հաւաքածոյիս մագաղաթեայ Աստուածաշունչիս Յակոբ Սարկաւազը, որ ընտիր գրչութեամբ գրած է ձեռագիրս 1638ին, ուր սակայն գրիչը մինակ իր անունը կու տայ առանց աւելի մանրամասնութեան:

Գիտնական հայրը Բրիտանական Թանգարանի թիւ 24 Աւետարանը (1608էն Սպահան) եւ Օքսֆորտի Պոտլեան Մատենադարանի թիւ 53 (1609էն Սպահան) Աւետարանը կ'ընծայէ Ստեփանոս Զիքի գրչութեան: Սակայն այդ ձեռագիրներուն յիշատակարաններուն մէջ գրչին մասին

միայն կ'ըսուի. «Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց եւ անպիտանս՝... զՍտեփաննոս սուտանուն քահանայ որ անուամբ միայն եմ եւ ոչ գործով» (1608) եւ դարձեալ «Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց... Ստեփաննոս սուտանուն քահանայ» (1609): Հոս որեւէ պատճառ կամ ակնարկութիւն չկայ այս գրիչ Ստեփանոսը Ձիքի հետ նոյնացնելու:

Դարձեալ այս նոյն Ստեփանոսի գրչէն է Սաղէմի մեր վանքին թիւ 1097 Մաշթոցը, ուր գրիչը կ'ըսէ. «Փառք... Եւ արդ՝ ես անարգ եւ անպիտանս: անարժանըս ապիրատս: եւ ամ(ենայն) մեղօք եւ աղտեղութեամբ դառածեալս անխմաստ եւ անարհեստ ի գիրս գծողաց Ստեփանոս մեղսասէր քահանայ անուամբս միայն եմ եւ ոչ գործովս»:

«Շնորհիւ տ(եառ)ն սկսա եւ ողորմութե(ամ)բ նորին կատարեցի զտառս ա(ստուա)ծայարմար որ է կոչեցեալ Մաշթոց. ի գեղաքաղաքիս Ձուղա ի յոտն ս(ուր)բ Յակոբա Մծբնա հայրապետին: Ի թվականութե(ան)ս Հայկազան տոմարիս. ՌՀԹ (1630) ի Հրոտից ամսամտին աւարտեցի: Անմեղադիր լերուք խոշորութե(ան) գրոյս երկու եւ երեք աշակերտի բան է վասն այն ցեղէ ցեղ է մէկ գրչէ չէ...»:

Իր գրչէն է նաեւ Նոր Ձուղայի թիւ 499 Աւետարանը, բոլորգիր, երկսիւն, տեղական թուղթ, կաշեկաղմ: «Արդ՝ ես յետինս ի կարգաւորաց՝ եւ անպիտանս՝ եւ անարժանս ի մանկունս եկեղեցոյ: բաղմամեղս եւ անխմաստ ի գիրս գրչութե(ան) եւ յանցաւորս ամ(ենայն) պատուիրանացն ա(ստուծո)յ Ստեփանոս՝ սուտ անուն ք(ա)հ(ա)ն(ա)յ որ անուամբ միայն եմ եւ ոչ գործով: Շնորհիւ տ(եառ)ն սկսայ ու ողորմութե(ամբ) նորին կատարեցի ըզս(ուր)բ աւետարանս՝ ի մեծ թուականիս հայոց ՌՂԷ (1648) ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի: ընդ հովանեալ

ս(ուր)բ Ա(ստուա)ծածնի եկեղեցոյն որ աստ կայ հաւաքեալ...» Եւն...:

Հուսկ գինքը յիշուած կը գտնենք Նոր Ձուղայի թիւ 512 Յայամաւորքին մէջ՝ Մարկոս քահանայ գրչէն. «Դարձեալ յիշեցէք... զՍր. Ա(ստուա)ծածնի միաբան ք(ա)հ(ա)ն(ա)յ զտէր Պաշտուրն, ըզտէր Անանեն, զտէր Ստեփանոսն, զտէր Աւետիսն, զտէր Պողոսն եւ զտէր Յովանէսըն, զտէր Յովսէփն, զտէր Ստեփանոսն, փոքր տէր Աւետն, տէր Առաքելն...»

Կրկին յիշեցէք զսրբազորող սորա զՍտեփաննոս ք(ա)հ(ա)ն(ա)յն եւ զԾնողսն զԱմիր Սուլթանն եւ զԱղեխանն եւ կող(ա)կ(ի)ցն Վարդենին եւ զորդին զՅովհաննէսն...»

Դարձեալ յիշեցէք զսրբազորող սորա ըզտէր Ստեփանոս եւ զաշակերտն զԱրուսթիսն»:

Իսկ ձեռագիրը գրուած է «ի քաղաքն Ասպահան ի գիւղն Ձուղա ընդ հովանեալ Սր. Ա(ստուա)ծածնին ի մեծ թուականին ՌԾ եւ Ժ.ին (1661)»:

1665ին դեռ նոյն այդ եկեղեցին կը գրուէր Ստեփանոս, ըստ Սաղէմի թիւ 1063 Մաշթոցին գրեալ Աղարիս գրչէն (բաղմարդին գրիչ մը), որ իր յիշատակարանին մէջ կը վկայէ. «Յիշեցէք զՍր. Աստուածածին եկեղեցոյ, որ նոր շինուածք ասի, զսրբազան միաբան քահանայքն. ըզմեծ Տէր Ստեփաննոսն, զՏէր Աւետիսն. եւ զմիւս փոքր Տէր Ստեփաննոսն. եւ ըզմիւս Տէր Աւետիսն. եւ զՏէր Առաքելն»:

Յիշեալ «մեծ» Տէր Ստեփաննոսը անտարակոյս 1608–1661ի միջոցին հոն գրչութեամբ զբաղող Ստեփաննոսն է:

Ուրեմն որոշ է որ ունինք Նոր Ձուղա գործող Ստեփանոս գրիչ մը, որմէ մեզի ծանօթ են գոնէ 1608, 1609, 1630 եւ 1648 թուականով ձեռագիրներ եւ իր մասին իբր «սրբազորիչ» 1661էն յիշատակութիւն մը: Հ. Ակինեան միայն 1608 եւ 1609 թուին գրուած ձեռագիրները նկատի ունենալով

այս Ստեփանոս Ձուղայեցիի գրիչը նոյնացուցեր է Ձիքի հետ, մինչ մեր գրիչը կը տարբերի Ձիքէն նոյնիսկ ընտանեկան պարագաներով:

Վերոյիշեալ Ստեփանոս գրիչը գրեթէ միօրինակ նուագականներով եւ անուան ձեւով ինքզինքը կը նոյնացնէ վերի յիշատակարաններուն մէջ: 1630ին կը վկայէ որ մէկէ աւելի աշակերտներ ունէր, գոնէ երեք աշակերտներ գրած են 1630ի Մաշթոցը: Իսկ Ստեփանոս սրբազորած է, ինչպէս որ յայտնի կ'երեւի ձեռագրէն: Իսկ 1661ի մեծածաւալ Յայամաւորքին սրբազորիչը կ'ըլլայ դարձեալ իր Արուսթիս կամ Յարութիւն աշակերտին գործակցութեամբ:

Այս Ստեփանոսին հայրը կը կոչուէր Ամիր Սուլթան, մայրը՝ Աղեխան, կինը՝ Վարդենիկ եւ որդին՝ Յովաննէս:

Ինծի ծանօթ են երկու ուրիշ ձեռագիրներ ալ Ստեփանոս գրչէ, որ սակայն նրկատելի պատճառաւ մը չեմ նոյնացներ վերոյիշեալ Ստեփանոս գրչին հետ:

Այս վերջին Ստեփանոսի գրչէն է Նոր Ձուղայի վանքին թիւ 192 Յովհաննու Մեկնութեան ձեռագիրը, գրուած Ասպահան (Շօշ) 1613ին, թղթեայ, նօսրգիր, կաշեկաղմ, սա յիշատակարանով. «Փառք... Արդ գրեցաւ ա(ստուա)ծաշունչ տառս որ կոչի քաղուածոյ Յովհաննու աւետարանի: Ձեռամբ. սուտանուն Լստեփանոս երիցու. ի թվ(ա)կ(ա)ն(ի)ս Հայոց ՌԿԲ (1613) ամի ի Շօշ ք(ա)ղ(ա)քն Ասպահան. ի հայրապետութեան մերոյ գեօղիս Ձուղայու, Մեսրոպ Արքեպ(իսկոպո)սի. ի դուռն Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնին: Ձոր արարեալ եւ մեկնեալ բանիբուն եւ քաջ հոգտորի եւ կրկին լուսաւորչի. Տէր Գրիգոր վարդ(ա)պ(ե)տի Տաթեւացոյ...»:

(Յիշատակարանին մնացեալ մասը ջնջուած է):

Այս Ստեփանոսի գրչէն է նաեւ Սաղէմի մեր վանքին թիւ 525ը: Բոլորգիր, երկսիւն: «Փառք... Որ ետ կարող(ո)ւ(թ)ի(ւն) տկար եւ անխմաստ՝ հոգ եւ մոխիր

անարժան Լստեփանոս էրիցու որ միայն անուամբ եմ եւ ոչ գործով. հասանել ի յաւարտ ս(ուր)բ մ(ե)կ(ն)չի՝ աւետարանիս Յովհաննու. ի թվ(ա)կ(ա)ն(ո)ւ(թ)ե(ան)ս Հայոց ՌՀԶ (1627) ամին՝ ի Շօշ քաղաքն Ասպահան՝ ի գեաւղն որ կոչի՝ Ձուղայ. ի թ(ա)ղ(աւո)ր(թ)ե(ան) Պարսից Շահապասին՝ եւ աթոռակալու(թ)ե(ան) մերոյ գեօղիս Ձուղայոյ՝ Պաշտուր վ(ար)դ(ապե)տի: Ի խնդրոյ բարեմիտ հեղահոգի. եւ երկիւղած մահգասի՝ Մարգարէ. յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնողացն բաշխէ Գրիգորին, Պանէ՝ Պանիարէ. Եւ եղբարցն հանդուցեալ ի ք(րիստո)ս մահգասի Ձաքարէ. Լստեփանոսին. քրեւըն Պանիարէ ամէն»:

Այս Ստեփանոսը նախ միշտ կը գրէ ԼՍտեփանոս, այդպէսով տարբերելով 1608–1611ի գրիչ Ստեփանոսէն: Մինչ վերջինս ինքզինքը «քահանայ» կը կոչէ ԼՍտեփանոս իրեն կու տայ «էրիցու» ձեւը:

Արդ չկարենալով նոյնացնել այս ԼՍտեփանոսը նախորդ Ստեփանոս գրչին հետ, ստիպուած եմ խորհիլ որ իրարու ժամանակակից եւ իրարու մօտ, երբեմն նոյն եկեղեցոյն հովանւոյն տակ (Սր. Աստուածածնի) երկու Ստեփանոս գրիչներ կ'արտադրէին: Եւ երկուքն ալ բոլորովին տարբեր անձեր էին Ստեփանոս Ձիքէն:

Հ. Ակինեան առանց որեւէ տուեալի՝ Ստեփանոս Ձիքը կը նկատէ որդի Ստեփանոսի եւ Շնահաւորի: Դժբախտաբար միայն Ձիքի հօր անունը ծանօթ է, իսկ մօրը անունը ցարդ կը մնայ անծանօթ:

Արդարեւ կայ Ստեփանոս գրիչ մը որդի Ստեփանոսի եւ Շնահաւորի, որուն գրչէն է Վենետիկի մեր վանքին մէկ Տօնացոյցը (ԻԵ) 1610էն եւ Սաղէմի մէկ հաւաքածոն, թիւ 1483, գրուած 1625ին, ուր կը կրկնէ իր ծնողաց անունը՝ Ստեփանոս կամ

(Ստե)փանոս եւ Շնահաւոր: Սակայն այս երկու ձեռագիրներն ալ գրուած են Երուսաղէմ եւ երկուքին յիշատակարաններուն մէջ ալ Ստեփանոսի Զուգայեցի ըլլալու մասին իսկ ակնարկութիւն չկայ, թող Զիքի հետ նոյնանալու ակնարկութիւն:

1620-1625ի Ստեփանոս գրիչը կը յիշէ իր կնոջ անունը Մուռաթ, մինչ Զիքի կը նոյն անունը Աննա է, ըստ Զիքի Յակոբ որդւոյն: Իրաւ է որ ըստ Զաքարիա Սարկաւազի (Ա. մաս, էջ 37-39) Զիքի կինը մեռած էր եւ ինքը այրի էր: Թէ ե՞րբ մեռաւ Զիքի կինը յայտնի չէ: Հ. Ակինեան պարզապէս 1610ին «պատահած ըլլալու է» կ'ըսէ. (անդ, էջ 114): Զաքարիա Սարկաւազ գեղարարութեան մը չի տար, եւ նոյնիսկ իր պատմածը կըրնայ Շահ Արաւ մեծի մասին՝ հայոց մէջ առատօրէն գոյութիւն ունեցած առասպելներէն մին ըլլալ:

Ուրեմն պատճառ մը չունինք նոյնացնելու, ընդհակառակն պատճառ ունինք (Մուռաթ եւ Աննա կիներու տարբեր անունները) խորհելու որ Ստեփանոսի եւ Շնահաւորի որդի Ստեփանոս գրիչն ալ՝ Զիքի հետ նոյնը չէ:

Փոքր ճշգրտմ մըն ալ:

Հ. Ակինեան խօսելով Բրիտ. Թանգարանի թիւ 24 եւ Պատրիեան Մատենադարանի թիւ 53 Աւետարաններուն մասին կ'ըսէ. «որոնց նկարագրողումը կատարած էր Մեսրոպ Հղանցի մասնակցութեամբ իր որդւոյն Գրիգորիսի» (անդ, էջ 117):

Բրիտանական Թանգարանի թիւ 24ի մէջ Մեսրոպ խղանցի իբր ծաղկող որոշ կը յիշուի: Գրիգորիսի անուն չկայ: Իսկ Պատրիեան Մատենադարանի թիւ 53 Աւետարանին մէջ դարձեալ ծաղկողը կը կոչուի Մեսրոպ (ըստ ցուցակագրին) որ անտարակոյս մեր խղանցին է: Գեղարարութեան ցուցակագիրը միայն ծաղկողին մէկ անկատար յիշատակարանը կու տայ մեղի ըսե-

լով 311 թերթին «վերջի գրչէ մը եւ սկիզբը անկատար» «...արպետն որ մականունն մազման կոչի. եւ միւս տը. մարտիրոս քաջ վարպետն եւ զորդին տը. գրիգորիս վարպետն եւ զամ(ենայն) աշխատաւորս...» (1): Մեսրոպ խղանցի յառաջ այս յիշատակածը գործածած է, սակայն եւս միայն մէկ ձեռագրէ մը յառաջ պիտի բերեմ, 1627ին Նոր Զուգայ գրուած եւ այժմ այդ հաւաքման թիւ 459 աւետարանէն. «Դարձեալ աղաչեմ յիշել ի տ(է)ր զհոգեւոր վարդապետքն իմ նախ տէր Սարգիս որ մականունն Մազման կոչի. եւ զմիւս վարդապետաց վարպետն զտէր Մարտիրոս եւ զորդին իւր զտէր Գրիգորիսն եւ զամենայն աշխատաւորս որ ի յարուեստս յայս աշխատանք ունին յիշեցեք...» եւն.:

Հ. Ակինեան Պատրիեան թիւ 53ին պակասաւոր յիշատակարանէն տարուած՝ կարծեր է որ յիշատակարանին մէջ յիշուած Գրիգորիսը Մեսրոպ խղանցիին որդին ըլլայ, մինչ իրականութիւնը այն է որ Մարտիրոս խղանցիի որդին էր: (Իր գործածած յիշատակարանն իսկ այդ մասին տարակոյս չի թողուր): Մեսրոպ խղանցի ունեցած է Գրիգոր որդի մը եւ Գրիգոր փեսայ մը, սակայն Գրիգորիս իր որդին չէ: Գրիգորիս իր հօր՝ Մարտիրոս խղանցիին՝ եւ հօրաքրոջ որդին՝ Տէր Խաչատուր խղանցիին՝ հետ միասին մեռաւ 1605ի առեւտները, որով չէր կրնար գործակցել 1608ի կամ 1609ի գրեալ աւետարաններու ծաղկումին: Գրիգորիս Սպահան չէ գլուխուած:

Այս մասին այսքան եւ անցնինք Ստեփանոս Նաղաշի կամ Ծաղկողի:

Ստեփանոս Զուգայեցի նաղաշ կամ ծաղկող երէցէն ունինք բաւական թուով աշխատութիւններ:

(1) Catalogue of the Armenian Mss. in the Bodleian Library. — Oxford, 1918, p. 110.

Իր հնագոյն գործը կը նկատեմ Լալայեան ցուցակին թիւ 381 Աւետարանը (2):

Յիշատակարաններէն կ'երեւայ որ Մատթէոսի եւ Մարկոսի աւետարանները գրուած են Տէր Աւետիս Թացուցի գրչէն, որուն կը պարտինք նաեւ նոյն ցուցակին թիւ 380ը, գրուած 1635ին, դարձեալ Լիմ, ուր եւ գրուած էր թիւ 381-ը՝ 1636ին:

Իսկ նոյն այս թիւ 381ին Ղուկասն ու Յովհաննէսը կը գրէ Կարապետ երէց գրչիչը՝ դարձեալ Լիմ՝ աւարտելով ձեռագիրը:

Իսկ ձեռագրին ծաղկողը կը յիշուի «Այլ եւ ծաղկեցաւ ձեռամբ Զուգայեցի տէր Ստեփանոս քահանայի»: Աւելի վերջը «տէր Ստեփանոս գեղեցկարան ծաղկողին. որ զանազան գունով եւ ոսկիազարդ վաշխութեամբ եւ լազլարդով գեղեցկացոյց»: Իսկ աւելի յետոյ Կարապետ գրիչ կը յիշէ «եւ զհոգեւոր հայր իմ՝ զհեղահոգի եւ մաքրամիտ տէր Ստեփանոս քաջ քարտուղարն. որ բազում երախտիք ունի ի վերայ մեղաւորիս». եւն.: Չեմ կարծեր, ինչպէս Հ. Ակինեան կ'ընդունի, որ Ստեփանոս Զուգայեցիի համար է որ կը խօսի Կարապետ գրիչը, այլ քաջ եւ արի Ստեփանոս վարդապետին համար է Լիմի առաջնորդ եւ անտարակոյս աւելի յարմար Կարապետ գրչի «հոգեւոր հայր» ըլլալու՝ քան թէ անցորդ Զուգայեցի ծաղկողը:

Նաղաշ Ստեփանոս որոշ է որ անցորդ մըն էր, քանի որ յաջորդ տարի իրեն կը հանդիպինք Խառակոնիս, ուր պահուած Աւետարանի մը մէջ յիշատակաւորած է. «... ի թուին Հայոց ՌԶԶ. եւ ես Ստեփաննոս Զուգայեցի Նաղաշ երէցս հանդիպեցայ Խառակոնիս...» (3):

Հոս դարձեալ Նաղաշ Ստեփաննոս Զու-

գայեցիի հետ կը շփոթէ Հ. Ակինեան Ստեփաննոս մը, որ Վանի մէջ գրչութեամբ գրադած է: Հ. Ակինեան առաջ կը բերէ Թորոս Աղբարի (հատ. Բ. էջ 416) աւետարանի մը յիշատակարանը «Գրեալ ի քաղաքն Վան, ի դուռն Տիրամար սուրբ Աստուածածնին եւ Գաբրիէլ սուրբ հրեշտակապետին, ի թուին Հայոց ՌԶԶ (1637) ձեռամբ Ստեփաննոսի...»: Ասիկա կը նկատէ Նաղաշն ու Զիքը:

Արդ, ինծի ծանօթ է այս Ստեփաննոս քահանան, բազմադիւն գրիչ, որուն գրչէն հնագոյն ձեռագիրն է Լալայեան ցուցակին թիւ 361 Աւետարանը՝ գրեալ 1613ին «յերկիրս Մոկաց, ի դեղս» որ Դաշտ կոչի»: Կը յիշէ հայրը՝ Մեղքոն եւ մայրը՝ Թուրեանդ, կինը՝ Սալամ: Դարձեալ իր գրչէն է նոյն ցուցակին թիւ 362 Աւետարանը՝ գրեալ 1615ին նոյն այդ Դաշտ գիւղը, եւ դարձեալ կը յիշէ իր ծնողաց եւ կնոջ անունները: 1613ի յիշատակարանին մէջ ինքզինքը կը կոչէ «մահտեսի», նշան՝ թէ զացած է Երուսաղէմ: Դարձեալ այս Ստեփաննոսի գրչէն է նոյն ցուցակին թիւ 14 Մաղմոսարան եւ Տօնացոյցը՝ 1632ին, որ ունի սա հետաքրքրական յիշատակարանը. «Արդ գրեցաւ սուրբ տառս այս, որ կոչի սաղմոսարան, տառացոյց եւ աղօթամատոյց, ձեռամբ յոգնամեղ, անարհեստ եւ փծուն գրչի Ստեփաննոս քուտ անուն քահանայի, ի քաղաքիս Վան, ի դուռն Տիրամար սուրբ Աստուածածնի եւ Գաբրիէլ սուրբ հրեշտակապետին, ի թուականութեանս Հայոց ՌԶԱ. (1632) ի դուռն եւ ի նեղ ժամանակիս, որ ամենայն աշխարհս ի յաւերն առեր վասն ծովացեալ մեղաց իմոց...» եւն.: Հուսկ կը յիշէ իր հայրը Մեղքոն, մայրը Թուրեանդ, եւ առաջին անգամ ըլլալով իր որդին Գրիգոր սարկաւազ: Երկար կը գրէ «ղարկալութեան» մասին, ժամանակին անցքերուն վրայ, եւ այլն:

Ուրեմն որոշ կը տեսնուի որ Հ. Ակին-

(2) Գուցակ հայ. ձեռագրաց Վասպուրականի, Ա. հատոր, էջ 887-890: Հ. Ակինեան անշուշտ վրիպակով էջ 289-290 նշանակած է: («Հանդ. Ամսօրեայ», 1947, էջ 149. ծանօթ. 14):

(3) «Հանդ. Ամս.», էջ 119:

նեան հոս ալ կը սխալի Թորոս Աղբարի (Բ. էջ 416) գրիչ Ստեփանոսը՝ Նաղաշ կամ Զիք Զուղայեցիին հետ նոյնացնելով։

Այս Ստեփանոսը դուրսէն ընդ Մովսէս Դաշտ գիւղէն էր, ուր ինչպէս տեսանք, գրեր է նախ 1613ի եւ 1615ի աւետարանները, յետոյ անցեր է Վան՝ ուր գրեր է 1632ի Սաղմոս-Տաւնացոյցը «ի դուռն Տիրամայր սուրբ Աստուածածնի եւ Գաբրիէլ հրեշտակապետի»։ Նոյն այս տեղը գրուած է Թորոս Աղբարի (Բ. հատոր, էջ 416) Աւետարանը 1637ին «ձեռամբ Ստեփանոսի» մը՝ որ Հ. Ակինեան սխալմամբ Զուղայեցի Նաղաշին կամ Զիքին հետ կը նոյնացնէ, մինչ որոշ է որ Դաշտեցիին է։ Գուցէ ինքն է Դաշտ(եցի) Ստեփանոս գրիչը, որ կը յիշուի Եգիպտոս 1637ի Փետրուար 2ին, որուն մասին վերը արդէն խօսեցանք։ Կրնայ ըլլալ որ ան 1632ի գրութենէն վերջ Վանէն մեկնեցաւ դնաց մինչեւ Եգիպտոս եւ անկէ 1637ին Փետր. 2էն վերջ դարձեալ Վան դարձաւ, ուր գրեց 1637ին Սաղմոս-Տաւնացոյցը։

Հաւանաբար Դաշտեցի այս Ստեփանոսի գրչէն ելած է նոյն ցուցակին թիւ 18 Սաղմոսարան-Ժամագիրք-Տօնացոյցը, որուն յիշատակարանը չի տրուիր եւ ցուցակագրութեան մէջ միայն կը յիշուի «գրիչ Ստեփանոս քահանայ»։ Ժամանակ՝ ժի դար։ Տեղի՝ Վան»։

Այս ճշգրտմէն վերջ անցնինք Նաղաշին։ Տեսանք զինքը 1636ին Լիմ եւ 1637ին Խառակոնիս։

Սակայն 1634ին ան կը գտնուէր Նոր Զուղա։ Այժմ այդ հաւաքման թիւ 398 Աւետարանը, բոլորգիր, ծաղկեալ ու մանրանկարեալ, երկսիւն, արծաթադարձ թաւեայ կողքով «գրեցաւ սայ ի յերկիրս Ասպահան, ի յեղր Նարնդալային որ ա-

սի Թորոսկան, ձեռամբ ոգնամեղ եւ մեղօք տատանեալ եւ աղտեղացեալ անարժան Գասպար երիցի... ի թուականին մեր ՌՁԳ (1634)» Խոճայ Գրիգորի համար եւ ունի սա ծաղկողի յիշատակարանը. «Յիշեցէք ի յերկնարարձիկ աղօթք ձեր զծաղկող եւ կազմող գտէր Ըստեփանոս Մուրատի որդի եւ զիւր ծնողսն. եւ զկողակիցն, եւ զիւր զըստերսն եւ զիւր եղբարքն եւ զքեզքն, եւ դամ(ենայն) արեան մերձաւորսն» եւն։

Ուրեմն մեր ծաղկող Ստեփանոս երէցին հայրը կը կոչուէր Մուրատ։

Ինծի այնպէս կ'երեւայ որ 1634ին Ստեփանոս ծաղկող մեկնեցաւ ուխտով Երուսաղէմ։ Ծամբան կը հանդիպի Հալէպ՝ ուր կը գրէ եւ կը ծաղկէ աւետարան մը այժմ նոյն քաղքին Ս. Քառասուն Մանկունք եկեղեցւոյ հաւաքման թիւ 15-ը։ Ստեփանոս իր մէկ յանգաւոր յիշատակարանով մեղի կու տայ Հալէպ գտնուելուն պատճառը(4)։

Ստեփանոս Զուղայեցի
Տուն աւետ(ե)աց մտաւ ածի.
Երուսաղէմ յաւժարեցի։
Փութով Պարսից երկրէն ելի.
Աստ Բերիա քաղաքս հասի.
Նստեալ փութով գայս ծաղկեցի.
Ոսկով պայծառ զարդարեցի.
Սակաւ պաշար մամփիս առի։
Եւ գճեգ հայցեմ արտասուալի.
Բարեմապետի հաճիպագի.
Եւ ցնորիս տուի ողորմի։

Տողերու սկզբնատառերը կը կապեն Ստեփանոս Երե(ց), ինչպէս որ Հ. Ակինեան ալ դիտած է։ Իրապէս «փութով» Սպահանէն մեկնած ըլլալու է Ստեփանոս որ հազիւ՝ դէպի Երուսաղէմ իր ճամբուն

վրայ՝ Հալէպ հասած կը ստիպուի գրութեամբ ծախքերը հանելու։

Այս ձեռագրին մէջ ալ այլուր կը յիշատակագրէ «Զմեղապարտ եւ անարժան տրուի եւ անպիտան Ստեփան(ոս) գրող եւ ծաղկող սորա յիշեալիք. եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ»։ Իսկ մեղի համար հոս անկարեւոր տաղաչափեալ գրութեան մը տողերու սկզբնատառերով կը կապէ «Ստեփանոս Նաղաշ Երէ(ց)»։

Երկար չէ մնացած Երուսաղէմ եւ ճամբայ ելած է դէպի Սպահան այս անգամ տարբեր ուղիով։ 1636ին իրեն կը հանդիպինք Լիմ, ուրկէ կ'անցնի Խառակոնիս։

Ստեփանոս Նաղաշին կամ ծաղկողին կը հանդիպինք 1646ին Սպահան։

Նոր Զուղայի հաւաքման թիւ 338-ը թղթեայ, բոլորգիր Աւետարան մըն է, գրեալ ՌՂԵ (1646) թուին «ի յերկիրս Պարսից, ի քաղաքս Շօշ որ է Ասպահան, ի դեղս Թովմասկան. ընդ հովանեաւ Սբ. Ա(ստուա)ծածնին»։ Գրեալ Խոճա Մանուկի համար Աստուածատուր գրչէն եւ ծաղկուած «մեղաւորս նրւստ անուամբ զըՍտեփանոս ք(ա)հ(անա)յս, իմոյս անարժան ձեռօք եւ փտեալ մատեամբս ծաղկեալ նկարեցի զս(ուր)բ աւետարանս, եւ զարդարեցի զսա ոսկով եւ լաճվարդով, եւ այլ գոյն զգոյնիւք»։

Դարձեալ իր գրչէն է Նոր Զուղայի հաւաքման թիւ 219 Յայտմաւորքի ծաղկումը։ Գրիչը՝ Գասպար քահանայ (ճանօթ ուրիշ գործերով ալ) իր Մարիսա աշակերտին հետ Մշկնաղի համար, գլուխ բերելով Յայտմաւորքի «յաւարտումն ի յանուանի դեղս Տովմասկան, որ է եղր

Զուղայու ընդ հովանեաւ Սբ. Ա(ստուա)ծածնին ի թիւն ՌՁԷ» (1658)։ Հոս ծաղկողն ալ ունի իր յիշատակարանը «Կրկին անգամ յիշեցէք ի Քս. զծաղկող սորա ըլլա(է)ր ըՍտեփանոսն եւ զորդիքն իւր զՄալումն եւ զՎարդանն եւ զՄուրատջանն որ երանդ երանդ ծաղկեաց զսա յիշեցէք եւ Ա(ստուա)ծ ողորմի ասա»(5)։

Այսպէս թիւ 398ի յիշատակարանէն իմացանք որ Ստեփանոս ծաղկողը իւր հայրը կը կոչէ Մուրատ իսկ թիւ 219ին մէջ կը կոչէ իր գաւակները յաւումն Մալում, Վարդան եւ Մուրատջան։ Ուրեմն դարձեալ բոլորովին տարբեր մէկը Զիքն։

Նոր Զուղայի Ամենափրկչի վանքին տաճարին մէջ Աստուածածնայ նկարին տակ ստորագրուած է Տէր Ստեփանոս Պատկերաւան։ Իսկ դարձեալ ճանօթ է որ այդ տաճարին երկու տարբեր շրջաններէ որմանկարներէն մին պատրաստուած է տաճարին շինութենէն ամիջպէս վերջ, անտարակոյս Տէր Ստեփանոս Նաղաշ, գրիչ, ծաղկող եւ պատկերահան Զուղայեցիի եւ դոնէ իր Մալում որդւոյն վրձինին արդիւնքը ըլլալու է։ Տաճարին որմանկարներէն ոմանք նման են թիւ 219ի մանրանկարներուն։ Այս մասին առ այժմ կը լըռեմ, մտադիր ըլլալով ուրիշ առթիւ անտիպ մէկ գործին մէջ մանրապատում խօսիլ։

Այսքանով կ'աւարտի Ստեփանոս Նաղաշի մասին ըսելիքս առ այժմ։

Որեւէ տարակոյս չկայ ուրեմն թէ Ստեփանոս Նաղաշ Զուղայեցի ալ Զիքը չէ։

Աւարտելէ առաջ փոքր ծանօթութիւն մըն ալ Զիքի մասին։ Իր յիշատակարանը Աստուածաշունչ գրոց իրապէս 1621 թրւականէն է ըստ ինծի ճանօթ 1639 թուական ձեռագրի մը, ուր կը գտնուին Զիքի այս երեք յիշատակարաններն ալ։

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

(4) Ցուցակագիր Արտաւազդ Սրբազան Սիւր-մէկան, «Ժամանակ՝ անյայտ, 1660ական թուին» կը ցուցակագրէ առանց իր պատճառը ըսելու։ Իսկ Հ. Ակինեան 1619 կամ առկէ քիչ յետոյ կ'ըն-

դունի, անտարակոյս Զիքին կենսագրութեան յարմարցնելու ջանքով։ Ես վերի տուեալներով անվարան 1634-1636ի միջեւ տեղ մը, աւելի 1634ի մօտ, կը տեղաւորեմ։

(5) Այս թիւ 219ին էջ 247ր յիշատակարան մը «... ծաղկողի սորա տ(է)ր ըՍտեփանոսին եւ որդոյն իւրոյ Մալումին եւ ամ(ենայն) արեան մերձաւորացն ամէն»։ Ըստ երեւոյթին՝ Մալում գործակցած է իր հօր ծաղկելու արուեստին մէջ։